

լինի մէջ 90.000 զօրք կը դրոշմէին, բայց և այնպէս պուրպուհեան աւագակաց գնդերը երկար ժամանակ խռովեցին Վաթուկի երկիրը, թողնելն նաև Վաթուկի տնային կայսերութեան ժամանակը:

Ստորագրէ որ առանց օտար տէրութեան մը յայտնի միջամտութեան, Վերին ապստամբութիւնը ամենին յաջող վախճան մի չկրնար ունենալ: Իսկ օգնութեամբ դրամոյ՝ զոր Մոսկուայի օրադիրը կը յիշէ, կրնան կամաւոր զինուորներ վարձել ու երկնցնել խռովութիւնը: Բայց այս խռովութեան մէջ կը տարբերակուի բան մի պիտի չշահին:

Բարձրագոյն Վուլք ցանկալով ճշդիւ իմանալ Վերին գործոց այժման վիճակը՝ արտաքին կարգի դրոշմակալի պաշտօնի յիշեալ կողմն յուշարկեց զվստմաբար Ստորագրէ Եֆէնտին՝ որ վաճառականութեան պաշտօնատէր խորհրդական և լէրայի քաղաքականական ժողովոյն նախագահն է:

Ներսիսյանի գրեթէ ամեն գլխաւոր քաղաքացի մէջ մասնաժողովներ հաստատուած են հեղինակութեան երեւելի անձինքներէ՝ դրամական և ուրիշ ամեն կերպ օգնութիւններ ժողովելու համար ի նպաստ կրէտացւոյ: Եթէ այս եռանդը ժամանակ մի շարունակուի, իւրաքանչիւր կրէտացի մեծ հարստութեան տէր պիտի ըլլայ, կըսէ Վ. Պօլսոյ լրագիր մի:

Մոսկուայի մէջ ևս Ռուս եկեղեցականներէ բաղկացեալ ժողով մի հաստատուեցաւ, որ կրէտացի կարօտ աճանց համար օգնութիւն պիտի ժողովէ: Պաշտօն օրադիրը կըսէ, թէ առայժմ կրէտացւոյ համար դրամական օգնութիւնները՝ փառաւոր յաղթութիւններէ աւելի հարկաւոր են:

Պէրսիսի և Լիփսիկայի մէջ ալ մասնաժողովներ կազմուեցան կրէտացի չքաւորաց համար օգնութիւններ ժողովելու նպատակաւ: Ըստ գործը անշուշտ մարտաբարական կը լըլար, եթէ ուրիշ նպատակ մի չունենար: Սակայն շատերը կը կասկածին թէ մի և նոյն ժամանակի մէջ այսպիսի մասնաժողովներու հաստատութիւնը՝ ի Ռուսաստան և ի Եւրոպա, քաղաքական նպատակ մի պիտի ունենայ:

Վուլքէնը որ մեր կարծիքը սխալ ըլլայ, կըսէ գաղղիական լրագիր մի, բայց կերելի մեղ թէ ուրիշ բան նկատուի է օգնութեանց մասնաժողովոց կազմութեան մէջ: Մեղ կը թուի՝ թէ քաղաքականութեան գործը սահմանեալէ քաղաքական գործը ծածկելու:

ԱՅՔԱՅԻՆ

Անցեալ շաբթու, բարեկամի մը ձեռք երկու կարեւոր գրութիւն ընկալար, խնդրանք որ նրատարակեմք զայնոսիկ Մշակուող Արարեան միջոցաւ:

Մեր ազգասիրական անկողնապահութիւնը անհրաժեշտ պարտք կը դնէ մեր վերայ՝ փութալ ի գործ դնել մեր պատուական բարեկամին խնդիրը: Որուն նպատակը ճշմարտութիւն մի յայտնել եւ զրապարտութիւնը խայտառակել է:

Եւրոպայի բարեկամ անապատող գերատաւան տէր Սարգիս Զալպեանց սրբազան արքեպիսկոպոսն՝ իւր բարեկամին գրած նամակին մէջ նետեալ գաւալի դիտողութիւնները կընէ, որոց վերայ՝ ինչպէս նաև յիշեալ երկու գրութեանց վերայ մեր բնութեցողաց ուշադրութիւնը կը հրաւիրէ:

«Եթեմ ճամարիմ յայտնել բարեկամիդ, քէ յետ մանուան երջանկայիշատակ Հայրապետին Տեառն Վերինի հոգեւոր ծնողին իմոյ, գործաւ գրադարտութիւնս եւ գրադրական սպանութիւնս կրեցի ի ձեռնանկ անիրաւաց, զեն քաղուն ի ձեռն. եւ սոյնպիսի անարժան յարմ սկսեալ ի Վեփա գետոյն ցգանգեա տարածեցին անստարագիր նամակոյդ, զազգն ամենայն ածելով ի սարսափ եւ ի գալազողութիւն: Բայց Աստուած՝ որ արդար է եւ դատաստան նորա ճշմարիտ, յետ տասնամեայ միջոցի փորձելոյ զիս ի բովս տանջանաց ական յանդիման նեղեցալ իմոց՝ յայտնեաց զբնամիտ, ական յանդիման եւ գրաւաճան ազգի եւ եկեղեցւոյ եւ նոյն իսկ անձին Հայրապետին, որպէս անկիր տեսանել ի սոյն մատուցեան նամակին՝ որ նոր այժմ գալ ի յայտ, եւ ի նամակի իմի՝ որ առ գրադրոյն ժողովն Կ. Պօլսոյն»:

ՊԱՏՃԷՆ ՆԱՄԱԿԻ

ԱՌ ԳԵՐԱՎՈՅՆ ԺԱՂՈՎՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Պարոն Ստեփաննոս Պիւր Պօլսոյն Պաթաղեանց ի դատաւոր յորինեալ յինքնէ՝ ի 1863 ամի, երես 188 յոր. 158, զիս և զուսանէ, թէ՛ Չալպեանց իւր անարժան վարմունքով և Ռուսաստան բարոյքն հանդուց

եալ Վերին կաթողիկոսի ազգասիրական ձեռնարկութեանց զէմ հակառակութեամբ և անոր անձին զէմ թշնամաբար վարմունքով դանձրեց զայրացուցեր էր և ասելի եղեր էր ամենեցուն:

Ի տեսանելն իմ զայս անարժան դրութիւն, որպէս երեւի հաղորդեալ նմա յայլոյ, յուսմէստ արարեալ զաւալինն լուսնի, գիտելով միտնգամայն զամենայն ստույթիւն, սրբաւնակեալ ի նմին. սակայն ոչ կամելով իմ տալ զաւթի գալթիւնս իման ազգիս, վերաբերեալ կրնալայն երջանկայիշատակ Հայրապետին Վերինի կամեցալ յապաշտօն առնել զազգն. ուստի խնդրեցի ի գերագոյն ազգային ժողովոյդ գալ ի քննութիւն ըստ արդար խղճի. սակայն մինչև ցայսօր զգաղապար չեղէ արժանի այնմ շնորհաց զմէն զատաստանեօք:

Իսկ երբ գնացի ի սուրբ Եջմեան վանն ընտրութեան Հայրապետին, առնել զանձնախորհրդան մեծի մայրաքաղաքիդ և վանն այսր իրի խօսեցայ ընդ նոսա. ապա լուսն ի նոցանէ, թէ՛ կանոն ազգային ժողովոյդ պահանջէ անշուշտ զփաստաբանս, զորս եւ ոչ էի նշանակեալ. բայց և այդ սեպուհ պարտականութիւն էր զեւրադոյն ժողովոյդ ծանուցանել մեզ. Կէս որոյ եւ մտազեր եղէ կամ անձամբ անձին ներկայանալ ի դատ և կամ յիմնէ կողմանէ կարգել զփաստաբանս առ ի կատարել զայդ սրբազան պարտաւորութիւն ըստ պահանջ ման հարկին: Սակայն Ստուած՝ որ արդար է և դատաստան նորա ճշմարիտ, յետ քննելոյ զիս ի բովս փորձանոց յընթաց տասնամեայ միջոցի, ազատ կողմաց զիս ի դոյն մատուցեալութեանց, և ինքն ելել վանն իմ պաշտպան և փաստաբան ընդզէմ՝ ամենայն դրաբանութեանց Պ. Պաթաղեանցի, յայտնելով զամենայն մտանկէս, թշնամիս և զհալաւորութեամբ ամենայն ազգաւորական բարեաց տեսան Վերինի երջանկայիշատակ Հայրապետին, ի լոյս ածելով նոր այժմ զմտնոյթեանն նոցա գէլը, զորոյ օրինակն ընդ ամեն առաքիմ: Աւտի աղաչեմ զազգային ժողովդ, զինա յանձն առնալ տալէ զայս ստրկաբնիկ մտնոյթեանն գիր Պ. Պաթաղեանցին, որպէս զի նա ի լոյս առնեալաւորաց արժանի ընթերցելու է, թէ՛ ոչք եւ անհատաւորս, թշնամիք, մաքնիք, դաւաճանք և հակառակք ամենայն ազգասիրական ձեռնարկութեանց երջանկայիշատակ Հայրապետին Վերինի պաշտպանին հայրենաց, և ո՞վ է անձնընտ, հաւատարիմ, հլու, հպատակ մշակ հայրենի եկեղեցւոյ, կատարող ամենայն ձեռնարկութեանց ազգային բարեաց, և միակ մեծերիմ համարող նորա և հակառակ տա ամենայն անարկութիւնս և Վերինի ընթերցելու ուշի ուշով, թէ՛ զիս աշխատին թշնամիք հայրապետին կողմէլ զյաջորդակ գործիս ի ձեռնաց նորա՝ որպէս ինքեանք արժանի համարձակ գործեցանք ինչ զորեալ էին ցայն վայր ժամանակի. վստահող ջանան, զի մի լիցուք մեր անգամ Ստեփանոսի, որպէս թէ՛ մեռալ անդաւանկութեամբ կարծել ունին խաղաղասիրական խորհրդածութիւնը և բարեկիցութեամբ զատուցութիւնը վանն օգտի եկեղեցւոյ, և ընդհակառակն յիշատակելու անձին զայն օրինաւորութիւնը, անձնաշահ խորհրդածութիւնը, անդաւանկի անկարգութիւնը յամենայն մասան և եկեղեցական կառավարութեան, անխորժաւորի կորուստ և անվստման վիճմունք, տարածանքութիւնը և անարաւանութիւնը ի միջի առնեալաւոր Ստեփան. սակայն առաւել լու ինչք, եթէ գրեալ էին թէ՛ յետ մտանկէս նորա ի Ստեփան խանգորին ամենայն ճանապարհ խորհրդածութեանց մերոց, մաքնութեանց, զաւարտութեանց և ազգապաշտ չարեաց, և խաղախն ամենայն ճանապարհք եկամտից, զորս ստանալ յանրաւոր ի զօգտաւորութեանց, ի կաշառայ ի սուտ վրայաւ կանոց, յանարժան ձեռնադրութեանց յուսանելն յառանձին վիճակաց, յեկամտից աթոռոյն ի ձեռն գործաւ կողմց մերոց արքանեկոց, և այնպէս և ցամաքին արտաւոր գրեկեցն, որք չեն մեզ օգուտ և շահուէտ: Տեսցէ նոյնպէս, թէ՛ գերագոյն ժողովդ և թէ՛ նա ինքն Պաթաղեանցն, զոր ոչ կարացին առնել թշնամիքն Ստեփանի և նոյն իսկ Հայրապետին՝ յուսուր կենդանութեան նորա, զնոյն արարին ի ձեռն Հայրապետին Մատթէս, որ անտեղեակ էր զաղտնի խորհրդոց նոցա և գործոց. բայց այս ևս ազգային զգաղապարութիւն, զի երբ երջանկայիշատակ կաթողիկոսն Վերին լուսալ զշաշն վերջելեալ մատնութեանն՝ հանդերձեալ էր գնալ ի Ստեփանի սուր արդարութեան ի ձեռն իւրում առ ի սլափեալ զթշնամին աղիւ և եկեղեցւոյ՝ և այն արդար քննութեամբ, մեռանք յանկարծ ի Տիֆլիս, և գործն մնայ ի թաղնութեան. իսկ Մատթէս կաթողիկոսն ի նոյն ծանուցեալ զսխալանա իւր և զսխալացուցանուան

յետ երկոյ աւուրց կամիւր գնալ ի Տիֆլիս ի վրէժանդութիւն արդարութեան, և նա մեռանք տարածում:

Ի վերջոյ խաղաղութեան ծանուցեալ իմ զթշնամիս և զհալաւորութեան անձին Հայրապետին Վերինի և իմ, այսուհետև չունիմ մեղադրել զվրէժի երկատարացն. զի և նորա գործը մարդ և ոչ իրել զՍտուած սրտագէտ սխալեցան ի խորհրդի բանից նենգաւոր թշնամեաց և խօսեցան զայն, զոր լինէ լուսն ի նոյնանէ: Ստեփան Պ. Պաթաղեանցին ճանաչել զխորհրդան և զհակառակ կողմն, և հրապարակաւ խոստովանել զսխալանա իւր յայտնելով միտնգամայն հաղորդոյն ինքեան զդոյն աւարժան լուր, որպէս ի ազատ լոյսի ի սպանաւորաց Մարգարէին, որ ասէ. վայր սախեց զհարն բարի, և զբարին չար. զհատարն լոյս, և զլոյսն խաւար:

Ոչ աւելորդ համարիմ հաղորդել և զայս, թէ՛ որպէս Պ. Պաթաղեանցն, նոյնպէս և ամենայն զանգատողք գինէն, թո՛ղ այժմ լուսալս ծանկն թէ՛ արդարեւ ես իսկ եմ լուսլ միտն համարող, համակամ, մտերիմ սրտացու, հրամանակատար և միտնգամայն յաջողակ գործի ի ձեռն Վերինի երջանկայիշատակ Հայրապետի յընթաց 11 ամիս ի խոստովանելու նորա, զոր չկարիմ չխոստովանել:

Ստեփան ամենեցուն զնէլ ի կշիռ արդարութեան զամենայն ազգային գործաւորութեան նոյն Հայրապետին և կողմը, որով ծանկնցն զիս կամ թշնամի հայրենեաց կամ անձնազոհ ծառայ, որպէս և կամեցան: Թէ՛ պէտ մանկիչքն այնքիկ խոստացեալն էին զնէլ ի կշիռ, բայց ոչ կարացին զլեռնել անշուշտ, թէ՛ ի կշիռ իւրեանց մեղանչեն, և ինքեանք տեսնել թշնամիս ի միտն. վստահող լոյսին աղաւթնելով միմայն յամենա տիրալ զնէս ինքեանց, ի քսութիւնս, ի բարատանս, յանստարագիր նամակնիս և ի գրապարտութեանս. որք յոյժ ամբողջ են վան ամենայն դերարժան, վստմ, խոհական և իմաստուն արանց:

Ի Եւրոպայ, Սարգիս արքեպիսկոպոս ի Նոյնիս 1866 ամի: Զալպեանց: (Մատուցեալ գիրը լազորդ բռնով):

ՊԱՏՃՈՒՄԱՆ ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ՄԻ

Ընդհանուր հիւպատոս վստմաշուք մօսի Վեթիկոյ իմմը, ընկերութեամբ հիւպատոսի փախանորդ մեծաշուք մօսի Ստեփան Վեթիկոյ հաճեալ այցելութեան զալու սուրբ Մեսրոպեան վարժարանին: Ուսումնասէր ընկերութեան անգամները, ազգային երեւելիներէն ոմանք և յիշեալ վարժարանին ընդհանուր կառավարիչ Ռեհանեան մեծարգոյ մօսի Ստեփանը ակնածական վայելուէ յարգանք ընդունեցան Վաթուկէն կայսեր արժանաւոր երեսփոխանը, որ մարգաւորական ոգեւոլ աչքէ անցուց աշակերտաց զանազան աշխատանքութիւնները, մանրամասն տեղեկութիւնս ներստացաւ տրուած դասերուն և անոնց մեթօտին վրայօք. աշակերտաց թիւը հարցուց, անոնց քաւարակութիւնը ձրի ըլլալը իմացաւ. վերջապէս Մեսրոպեան վարժարանին բարեկարգ քննաքննութիւնը յայտնել մօսի Ռեհանեանին յորդորելով զիս յարատեւել իւր աշխուշ և եռանդուն ջանիցը մէջ, և իւր բարոյական բարձր պաշտպանութիւնը խոստանալով ամեն պարագայից մէջ ի կատարեալ յաջողութիւն աւսուցանելու զօրելի ճգնաց Հայոց ազգին:

Վաթուկէն Ներսիսի երեսփոխանը Մեսրոպեան զարդէն մեկնելով՝ սրբոց Հոգիսմանց վարժարանը գնաց. ուր՝ նմանապէս, հայկաբուն օրիորդաց հայրենի և մանաւանդ զաղղիներէն գրութիւնները և ձեռագործ աշխատանքութիւնները աչքէ անցուց, դասատուութեանց մեթօտին տեղեկացաւ և մեծապէս զոհ եղաւ վարժարանին ընդհանուր բարեկարգութեան, աշակերտութեան համար վարձուեցան ու անոնց մաքուր ու վայելուէ կացութիւնս:

Վստմաշուք Վեթիկոյ իմմը որ լեռնեալ քրիստոնէից քաղաքակրթութեան յատուկ պաշտպան Վաթուկի կայսերութիւնը կը ներկայացնէ քաղաքի մէջ՝ և իւր հայասէր վեհանքն զղայմունքով երեւելի հանդիսացած է, իւր մարգարեական այս այցելութեամբ մեծ պատիւ ըրաւ Հայոց ազգին և ուսումնասիրաց քաջալերութիւնը հաստատեց խոստանալով Մեսրոպեան վարժարանիս աշակերտաց տարեկան պարգեւաբաշխութեան հանդիսին ներկայ

դանուկը։ Ուստի կը փութամք Հայոց ազգին և մասնաւորապէս ընդհանուր կառավարչին խորին շնորհակալութեան հաւաստիքը հրապարակաւ յայտնել Նորին Վսեմութեանը։

Ահա անոր մասին Պէնթիքոյոյ կոմսին և հիւպատոսի փոխանորդին գրաւոր գոհունակութիւնները, որոնք հաճեցան իրենց ստորագրութեամբը, արձանագրել սուրբ Սեբաստիան վարժարանին այցելուաց անտրակին մէջ։

Հաստ երջանիկ եմ որ այցելութիւն ըրի Հայոց դպրոցին։ Կը բարեմտեմ իրեն յաջողութիւն և ի բոլոր սրտէ կը քաջալերեմ անոր արժանաւոր կառավարչը յարատեւելու արիւթ խառն և ժրոթեամբ այն շահին մէջ յորմէ յառաջ պիտի գոյ պատուի և երախտագրութեան ոչ միայն իրեն այլ և Հայոց ազգին։

Իզմիր, 22 Յունուար 1867 Ն. Ք.

ԿՈՄՍ ՊԵՆԹԻՔՈՅՈՅ

ընդհանուր հիւպատոս Պաղիկոյ։

Անձ որ կառավարեալ և անկեղծ գոհունակութեամբ կը գտնուի մայրս ի մէջ մասցի և անձնաւոր անձանց որոնք կարող եղած են հիմնադրելու կենդանի մը լուսաւորութեան և քաղաքակրթութեան այնպիսի երկրի մը մէջ, որուն ազդեցութիւնը դուրսէ քիչ մը չափին աւելի դէպ ի ծուլութիւն և անհոգութիւն տանի զմարդ։

Նոյն թուական։

ՍԻՆԵՔԻԼԻԶ

Հետեւեալ նամակը՝ որ բարեկիրթ մտաց և աշխատանքի սրտի մը անմեղ և խելացի յայտարարութիւնն է, ամենայն յոգեւորութեամբ կը հրատարակեմք ի տեղեկութիւն ողջմիտ հասարակութեան։

Վէ՛լէ (Զուլիքի) 26 Կիւտեմբեր 1866։

Մեծարգոյ խորագիր։

Ձեր երկրորդ ամանակեայ փորձով արգարտութեամբ վստահ կը համարեմք ձեր բարեկիրթ լրագրողի գիմարտ, յուսալով որ զրոթեան անոր մէջ անկիւն մը չնորոգելու չիք զգնար։

Գրոյս նիւթը երկու տարր՝ զգայմանց յայտարարութիւններ ըլլալով, և ներքին վիճակ շնորհելով ինծի զրոյս սահմանին ու առաջագրեալ նպատակս գործելու, կը փութամ նախ անկեղծ շնորհակալութեան և յարգանքով անոր հարկ տալու զգացմունքը իմ լրագրարկու մտաւեցանքը Վաշինգթոն քաղաքին ժողովոյն, և նոյն քաղաքին պատուական Արշակունի 784, 788 և 792 թուոց մէջ գրուած երեք նամակաց մեծապատիւ հեղինակին, որ միմիայն ի սեր համարութեան և արգարտութեան մեր որոյս իրաւունքը հասարակաց մարդկութեան անուշառ դատաստանին առջև յերեւան հանելով բարոյապէս պաշտպանել ուզեք են։ Վարձեալ նոյնպէս լիափութ և լիարեւան շնորհակալ կը լըմք այն մեծարգոյ լրագրարկուոց, որ ձեզի պէս հաճեք են ազգասիրութեան իրենց լրագրաց Ելեր բանալու ի նպատակ այսպիսի նուիրական արգարտակց գրութեանց։ Իմ ակար զրջիս հարկ չմնար անմեղ որոյց այցելուաց և պաշտպանաց դովնար ընկելու, քանի որ իրենց գովութիւնը և վարձքը երկուսուր հօրմէն է։ որոնք իր բարձր պատուանուններուն կարգը կը իջէ ինքզինքը Հայր և Գառնար որոյց և այրիաց։ Որով մենք ալ մեր արգարտակց պաշտպանները արգարտութեան և Ստուծոյ պաշտօնեայն տեսնելով՝ անկեղծ և Երախտագր յարգանքով կը մատուցանենք միշտ։

Շնորհակալութեան պարտքը՝ որոյց որ ակն է հատուցանելու վերջը, կ'անցնիմ զրոյս երկրորդ նիւթոյն։

Անձ եղաւ արգարեւ տրտմութիւնս՝ տեսնելով յուսոք սրտի որ իմ սիրելի հօրեղորս մեծապատիւ Բէլգիան Սիլվիոյ-Պէլլին պատուաւոր անունը այս առթոյն կը ծամծի, որ անուշտ չի բնար հաճոյք ընծայել ընտանեկէ արտիւ։ Ընդունած կրօնասիր գոտիարարութիւնը և ազդասիր կրթութիւնս իմ վրաս կարեւոր աւ միանշանայն քաղցր պարտք մը դրած ըլլալով՝ մեծ սէր ու մեծ յարգանք ծնողաց, Ստուծոյն կողմը զանոնք ծանշալով ինծի իմ ամեն բարեաց պատճառք, որով և սրտիս և մտաց պաշտամանը արժանաւորը։ որով հետեւաբար իմ մեծապատիւ հօրեղորսս ալ յար և նման իրրեւ զայն սիրելու և պատուելու պարտքս յօժարութեամբ կը տեսնեմ, մանաւանդ զիսի մահուան հօր, ու խորհելու և զրկելու հասակը համեմատ միջոցին ուղիւ սիրելի կը մեղ տեսնել զինքը մեզի հետ հայրական յարաբերութեանց մէջ գտնուած և ոչ իմէ լրագրաց մէջ այս օրինակ ներկայացած։ Ինչպէս վեր ըսի, սուսմամբ տեսնանք ընթացքին մէջ զոչ կը լըմք միայն յայտնելով

Իմ կրկին զգայմունքս զոր այս հրատարակութիւնը ինձ թելադրեցին, ու կը վերջապենմ թուով մաղթելով ի հետեւէ մեծապատիւ սիրելի հօրեղորսս կենաց երկարութիւն, զործողը ըստ Ստուծոյ կարելի յաջողութիւն ու բարի վայելում։

Մատուցանելով ձեզ կանխիկ շնորհակալութիւններս ընդունեցէք, արգոյ խորագիր, յարգանացս ողջոյնը։

Մնամ ևսյն։

Կարապետ Պրիգոր—Բիւզան։

Սինեքիթէն (Հնդկաստան) ազգասիր բարեկիրթ մէկը անցեալ Գեղեմեմբերի 22 ամսամիտով հետեւեալ ցաւալի տեղեկութիւնները կ'առայ մեզ։

“Կանադայի արժանի նոր լուր մի չունիմ զրեւո ձեզ՝ բայց ի Հնդկաստանի մեր պատուելի համազգեաց անսիրութիւնը և անմիաբանութիւնը, որ օրըստօրէ կ'աւելնայ ի կործանումն ազգիս, ուստի ազգեցեցուք զՍտուծոյ որ իւր երկնային ողորմութեամբ յուզարկեցէ և վերանորոգեցէ զմեզ, ապա թէ ոչ՝ զմիջ մեղաւորացս վիճակին։ Վանդ յազգայնոց կէսն ինկիլեցայեք են, կէսն՝ միմեանց արեւան ծարաւ են, և միւս մասն այնպիսի կացութեան մի մէջ կը գտնուին որ չի մտաւոր թէ ինչ ազգ են և ինչ հաւատք ունին։ Կոչում թէ ձեր կողմանց բնակիչ մեր պատուելի համազգեք սիրով և միաբանութեամբ կը վարուին միմեանց հետ ի խնդութիւն սրտի ճշմարիտ ազգասիրաց”։

Ո՛վ ազնիւ և սիրելի բարեկամ, որ ի Հնդկաստան բնակիք, ձեր յոյսը՝ զժողովարար, անհիմն է։ Մերը և միաբանութիւնը թուրքաստանի Հայոց մէջ և անհետ եղած է բոլորովին և մեր վիճակը՝ Հնդկաստանի Հայոց վիճակէն լաւագոյն չէ։ Վանդ մեր մէջ և մանաւանդ ի Կ. Պոլիս, ոմանք բոլոր քաղաքներէ, ոմանք կաթողիկէ և ոմանք ուրիշ կրօնափոխութեան հետեւի կուգին, ինչպէս լրագրոյս նախընթաց թուոյն մէջ ցաւք սրտի հրատարակած եմք։ Տէր ինքն այց արասցէ ընդհանուր Հայոց ազգիս։

Ի տեղեկութիւն Հնդկաստանի մեր ընթերցողաց, արժան կը համարեմք հանդուցեալ Վալեանդեանց պարոն Սիքայէի վրայօք գրուած յետադայ յօդուածը հրատարակել Արշակունի միջոցաւ։ Այս յօդուածը Սիքայէի Երթնալ լրագրէն կը բաղդեմք, որ ինքն ալ Վալեանդեանց լրագրէն առած է, Կ. Պոլսոյ հայերէնի դարձնելով զայն։

Հանգուցեալ Վալեանդեանցի վրայ երկու խօսք։

Մենք իր ժամանակին յայտնեցինք Ս. Վալեանդեանցի մահի սխուր լուրը և նորա մարմին Վալեանդեան բերելու և թաղելու։

Հիմա Մեզու Հայաստանիին մէջ տպուած Վալեանդեանի նամակներէն մէկ քանի մանրամասն տեղեկութիւններ մեր ընթերցողաց կը հաղորդեմք։

“Սիքայէ Վալեանդեանց ծնաւ Վալեանդեան 1830 Հոկ. 27ին։ Վորա ունեցած ուսումնասիրական եռանդը ի մանկութենէ յայտնի է։ Վալեանդեան 1846 թիւ տէր Գաբրիէլ Պատկանեանի քով աշակերտեցաւ և եկեղեցայն մէջ ալ զպրովութիւն կը ընէր։ 1847ին Վալեանդեան և Պատկանեան Ստամբուլ քաղաքի սկսեցան եկաւ զանի իրեն քարաւորար կարգեց, ուր վեց տարի այս պաշտօնը վարեց։

1853ին գնաց Մոսկուա և Բէթերսպուրի համալսարանին մէջ քննութիւն տալէն վերջը Մոսկուայի Լազարեանց ուսումնարանին մէջ Հայոց լեզուի վարժապետ կարգուեցաւ։ Վերջ ժամանակէն ետքը իր պաշտօնը թաղելով Մոսկուայի համալսարանին մէջ բժշկական դասի պարապեցաւ։

1858ին Ս. Վալեանդեանցը, Ս. Վալեանդեանցի հրատարակած “Հիւսիսափայլ” լրագրին գլխաւոր աշխատակիցը եղաւ։

1857 և 1858ին երկու անգամ Ս. Վալեանդեանցը գնաց Պոլիս, Փարիս, Վիեննա և ուրիշ տեղեր պտուտելու և ամեն տեղէ հայերու հետ ծանօթացաւ։

1860 Բէթերսպուրիի համալսարանին մէջ քննութիւն տալէն յետոյ արեւելեան Լեզուաց դաստիարակի կոչումն ստացաւ։

Բայց Ս. Վալեանդեանցի անմոռանալի և արդիւնաւոր գործը Հնդկաստանի մէջ Վալեանդեանի համար կտակ եղած փողերի բերելն էր։

Վալեանդեանի հիմնադրուելէն վերջը Հնդկաստանի

տանի հարուստ հայերը Վալեանդեան քաղաքի համար փողեր կտակ ըրեր էին։ 70 տարիէ հետէ այն փողերը հոն կը ժողովուէին, բայց Վալեանդեան բնակիչ հայերէն ոչ ոք կը վստահանար երթալ այն փողերը բերելու կորսուած կը համարուէր։

Ս. Վալեանդեանցը յանձն առաւ այն փողերը բերելու։ Վալեանդեանի Հայ հասարակութեան կողմէն Երեսփոխան ընտրուեցաւ և գնաց Վալեանդեան։ Հոն մեծ դժուարութեանց յաղթելով կտակ եղած փողերը ձեռք ձգեց և 1862ին բերաւ Վալեանդեան։

Բայց այն ժամանակէն սկսելով նորա օրերը անմիջապէս անցան և աս տարի Մարտի 31ին 36 տարեկան հասակին վախճանեցաւ։

Վալեանդեանի անցեալ ամի Վալեանդեանի 17 ամսամիտով նամակ մի ընկալաք, յորմէ հետեւեալ ազգային միջնորդական լուրերը կը քաղեմք։

“Հայաստանի աւուրս վեհափառ Պարսից Հահն շնորհեաց զըքանչան Արիւծոյ և Երեւանի կարգի երրորդ աստիճանի հանգերձ պատուաւոր հրովարտական առ զերազնիւ պարոն Սէթ Զ. Երզրեանց Տեղապետի մեծահամբաւ վաճառականն որ ի Վալեանդեան ի տրիտուր բաղմապատիւ օգնականութեանց զորս Երզրեան առնին առնէ Տեղապետի Պարսից հպատակ համազգեացն դիմելոց ի Հնդկիս ի խնդիր բաղդի աշխատութեան։ Հնորհեցաւ արդէս պարզեւ ըստ խնդրոյ սրբազան Սովետէ արքեպիսկոպոս աւանապատիւ Առաջնորդի մերոյ։ Մեծ են շնորհք քաղցրութեանց վեհափառ Հահնի Պարսից ի վերայ Հայ հպատակաց իւրոց։ առ որս և կարի երախտապարտ է և ազգ մեր բնակեալ ի Պարսկաստան”։

Սեթ ուրախութեամբ կը անհամբար, որ Պարսից բարեկիրթ կառավարութիւնը իւր մարդասիրական հովանաւորութիւնը և իւր առատագրութ շնորհները անպակաս կը ընէ Պարսկաստանի բնակիչ Հայոց վերայ, ուստի անոնց երախտագրութեանը (Թուրքաստանի Հայքս ալ ի բոլոր սրտէ մասնակից կը լըմք, տարակոյս չունենալով թէ Պարսից հպատակ մեր համազգի եղբարքն ալ իրենց կողմանէ անկեղծ սրտիւ հաղորդակից պիտի ըլլան մեր երախտագրութեանը՝ զոր կը պարտաւորեմք օսմանեան քաղցր կառավարութեանը, վասն ամենայն հայրական շնորհաց՝ որով մարդասիրաբար կը ինամէ Թուրքիաբնակ բաղմամբիւ Հայ ժողովուրդը։

Սեթին Յունուարի 14 թուոյն մէջ հետեւեալ ազգային ստակալի լուրը կը կարդամք։

“Երեսփոխանից գրուած նամակներ կը ծանուցանեն թէ ամենապատիւ Ս. Երզրեան Ս. Պատրիարքը թունաւորեալ փորձ մ'եղեր է, և այն եղեռնական փորձը նախ զերապատիւ Սահակ Եպիսկոպոսին վերայ գործադրուէր է։ Բայց դաւադրաց մէկը զըզլալով՝ իր յանցանքը Ս. Պատրիարքին խոտորակեցէ։ Նա ալ անմիջապէս դարմաններ ընել տալով Սահակ Եպիսկոպոսը մահուանէ ազատուէր է։ Այս գործը Ս. Պատրիարքին հրամանաւ կազմուած Խառն ժողովի մը քննութեանը յանձնուէր է, որ տակաւին կը շարունակուի։ Բայց արդէն հասկցուէր է որ այս նոզկալի ոճրին թելադրեւ Զարութիւն անուն վարդապետ մ'է եղեր”։

ՏՈՒՄԱՐԱՆԱԼՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Իր մանուկ հասակէն ի վեր այս գեղեցիկ արուեստին սիրահար ուսումնասէն Պ. Արմենակ Գ. Կոստանդեան Երիտասարդ գրագրին գրեթէ 430 էրեսփայլացեալ բառաւայ յիշքով յօրինած պատուանկան աշխատասիրութիւնն է։

Այս ամենակարեւոր արուեստին ուսումը մեր ազգին մէջ դիւրացնելու յատուկ նպատակաւ, հեղինակը յընթաց իւր այս գործոյն իւրաքանչիւր գիտելիքներու վրայ աշխարհաբար, դիւրեմաց սնով տեսութիւններ առանցիկէ գաւ, մասնաւոր ուշադրութիւն մատուցած է նաեւ անոնց գործնական մասերը արդի վաճառականութեան պարագայից համաձայն կարգադրելու։ որով այս գործը ընտիր առաջնորդ մի կընայ համարուիլ ամեն անոնց որոնք վաճառականութեան անցնալից կցարդ այս օգտակար արուեստին վաղապագոյ են։

Կը ծախուի Իզմիր Գ. Հ. Ծանկերիկեանի գրքատունը գին 5 Թրանք։

